

**ԱՇԽԱՏԱԿԱՐԳ**  
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ**  
**ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ**  
**ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) համաձայն ձևավորված համակարգող խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգը:

2. Խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի՝ որոշման մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի սոցիալական աջակցության Վայքի տարածքային գործակալությունը (այսուհետ՝ տարածքային մարմին) հինգ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է Խորհրդի անդամներին:

3. Խորհրդի առաջին նիստը հրավիրում և վարում է տարածքային մարմնի ղեկավարը:

4. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կազմը հաստատվելուց հետո հրավիրված առաջին նիստում, Խորհրդի անդամների թվից՝ բաց քվեարկությամբ, Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, երկու տարի ժամկետով, բայց ոչ ավելի Խորհրդի տվյալ անհատական կազմով գործելու ժամկետի ավարտը:

5. Խորհրդի նախագահի ժամկետից շուտ վերընտրություն հնարավոր է՝

1) Խորհրդի նախագահի հրաժարականի դեպքում.

2) Խորհրդի անդամների երկու երրորդի կողմից Խորհրդի նախագահի հրաժարականի գրավոր պահանջի դեպքում:

6. Խորհուրդը գործում է հասարակական հիմունքներով:

7. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է «Սոցիալական աջակցության մասին» և «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին, Հայաստանի Հանրապետության օրենքներին, Համաձայնագրին, սույն աշխատակարգին և այլ իրավական ակտերին համապատասխան:

8. Խորհրդի նիստերի անցկացման և (կամ) աշխատանքների իրականացման վայրը տարածքային մարմնի գտնվելու վայրն է:

**II. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

9. Իր իրավասության շրջանակներում Խորհուրդը՝

1) քննարկում և ուսումնասիրում է սոցիալական աջակցություն հայցող անձանց ներկայացրած դիմումները, փաստաթղթերը և կողմնորոշում նրանց սոցիալական աջակցություն ստանալու հարցում.

2) իր անդամների (նրանց ներկայացրած կազմակերպությունների) ուժերով կազմակերպում է տնային այցելություն և տալիս առաջարկություն՝ սույն կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքերում և կարգով՝ նպատակ ունենալով մեծացնել կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (ընտանեկան և սոցիալական նպաստներ, հրատապ օգնություն) հասցեականությունն ու համակարգի թափանցիկությունը:

3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N145-Ն որոշման NN3, 8 և 12, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N1069-Ն որոշման N2 հավելվածներով հսրհրդին վերապահված լիազորությունները:

4) ստեղծում է համապատասխան աշխատանքային խմբեր՝ լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտության դեպքում:

5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև Համաձայնագրով սահմանված այլ լիազորություններ:

### III. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

10. Խորհուրդն աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Նիստերը գումարվում են նաև Խորհրդի նախագահի կամ տարածքային մարմնի ղեկավարի նախաձեռնությամբ:

11. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

12. Խորհրդի նիստերը հրավիրում և վարում է Խորհրդի նախագահը, Խորհրդի նախագահի բացակայության դեպքում՝ Խորհրդի նախագահի հանձնարարականով՝ Խորհրդի անդամներից մեկը (իսկ դրա անհնարինության դեպքում՝ տարածքային մարմնի ղեկավարը):

13. Խորհրդի նիստի անցկացման վայրը տարածքային մարմնի գտնվելու վայրն է: Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կարող են գումարվել նաև արտագնա նիստեր: Խորհրդի նախագահը որոշում է Խորհրդի նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

14. Խորհրդի նախագահի հրավերով նիստին կարող են մասնակցել շահագրգիռ անձինք կամ նրանց օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև Համաձայնագրի այլ կողմերի, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

15. Խորհրդի նախագահը՝

1) հրավիրում և վարում է Խորհրդի նիստերը,

2) ստորագրում է Խորհրդի որոշումները, այլ փաստաթղթերը (քաղվածքներ, արձանագրություններ, առաջարկություններ և այլն),

3) իրականացնում է սույն աշխատակարգով սահմանված այլ լիազորություններ:

16. Տարածքային մարմինն ապահովում է Խորհրդի աշխատանքների կազմակերպական և գործավարական սպասարկումը՝

1) կազմում է Խորհրդի նիստի օրակարգի նախագիծը Խորհրդի անդամների և իր, ինչպես նաև Համաձայնագրին միացած այլ կողմերի ներկայացրած առաջարկությունների հիման վրա: